# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N183 12.09.2025թ.

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին (պայմանագրի կողմին), ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանատիրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-16/1 | ԲՄԱՊՁԲ-25-16/1-1 | 1 | Շանթարգելներ | -------- | 141600000 | «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ | 00170838 | ՀՀ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., շ 32/4 | ՀՀ պաշտպանության նախարարություն | 03.09.2025թ | N ԲՄԱՊՁԲ 25-16/1-1 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի | ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «Մնացականյան Դավիթ» ԱՁ-Ն (ՀՎՀՀ՝ 25295761) 2024 թվականի հունվարի 26-ից մինչև 2026 թվականի հունվարի 26-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի և «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ի միջև առկա է փոխկապակցվածություն , մասնավորապես՝ Ընկերության տնօրեն Դավիթ Էդվարդի Մնացականյանին է պատկանում «Մնացականյան Դավիթ» ԱՁ-ն, ինչը տվյալ գնման |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: | գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար: |

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ